ԱՄՆ-ի և Սաուդյան Արաբիայի միջուկային համագործակցության խնդիրներն ու մարտահրավերները տարածաշրջանային սրացման պայմաններում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 10.08.2026 թ.[1]

Անոտացիա

ԱՌՎԱԿ-ն անդրադառնում է ԱՄՆ-ի և ՍԱԹ միջև քաղաքացիական միջուկային ոլորտում ստորագրված «Համաձայնագիր 123»-ին: Դիտարկելով իրանական միջուկային ճգնաժամի դիվանագիտական և ռազմական հանգուցալուծման ձախողումները՝ բացահայտվում են Վաշինգտոնի այս քայլի հիմքում ընկած դրդապատճառները: Ուսումնասիրվում է Վաշինգտոնի, Էր-Ռիադի և Թել Ավիվի շահերի բարդ համադրությունը, ինչպես նաև գործարքի հնարավոր հետևանքները Մերձավոր Արևելքի անվտանգային համակարգի վրա: Առանձնահատուկ ուշադրության են արժանանում տարածաշրջանային «միջուկային սողանքի» վտանգները և Չինաստանի ուղղությամբ արտաքին կապերի բազմազանացման Սաուդյան Արաբիայի քաղաքականությունը, ինչն էապես թուլացնում է ամերիկյան դիրքերի կայունությունը տարածաշրջանում:

Բանալի բառեր. *ԱՄՆ, Սաուդյան Արաբիա, Համաձայնագիր 123, միջուկային ծրագիր, Իրան, Իսրայել, Աբրահամական համաձայնագրեր, անվտանգության ճարտարապետություն, Չինաստան, Մերձավոր Արևելք, խաղաղ ատոմ:*

1. «*Խաղաղ ատոմի*» վերաբերյալ ԱՄՆ-ի և ՍԱԹ-ի համաձայնագրի ծագումն ու բարեշրջությունը

2026 թ. հուլիսի 22-ին նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարեց, որ ԱՄՆ-ը Սաուդյան Արաբիայի Թագավորության հետ կնքում է *«խաղաղ ատոմի»* վերաբերյալ համաձայնագիր, ինչը վերջին մեկ տարվա ընթացքում ԱՄՆ-ի հակահիրանական երրորդ արշավի և Պարսից ծոցի տարածաշրջանում ծայրահեղ ծանր իրավիճակի պայմաններում բավականին անսպասելի նորություն էր:

Դ. Թրամփի հայտարարած համաձայնագիրը նշանավորում է երկարատև բանակցային գործընթացի ավարտը, որի հիմքերը դրվել էին դեռևս 2008 թվականին՝ միջուկային էներգետիկայի ոլորտում փոխգործակցության մասին հուշագրի ստորագրմամբ: Համաձայնագրի շուրջ լիամետրաժ առարկայական քննարկումները, որոնք ստացել են «Համաձայնագիր 123» անվանումը՝ 1954 թ. ԱՄՆ-ի «Ատոմային էներգիայի մասին» օրենքի համապատասխան բաժնին հղումով, սկսվել էին 2012 թ.՝ Բարաք Օբամայի նախագահության օրոք:

Այս գործընթացը լրացուցիչ խթան էր ստացել 2018 թվականին՝ Դոնալդ Թրամփի առաջին նախագահական ժամկետի ընթացքում: Սակայն 2023 թ. հոկտեմբերի 7-ի իրադարձություններից և դրան հաջորդած Իսրայելի պատժիչ գործողություններից հետո բանակցությունները դանդաղեցին՝ Էր-Ռիադի անհամաձայնության պատճառով Վաշինգտոնի՝ Թել Ավիվին բարեհաճություն ցուցաբերող դիրքորոշման հետ:

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 28.07.2026 թ.:

Հետագայում ինտենսիվ երկխոսությունը վերսկսվեց, ինչի արդյունքում մինչև 2025 թ. հոկտեմբեր փաստաթուղթը պատրաստ էր ստորագրման: Այնուամենայնիվ, ընթացակարգը հետաձգվեց Դ. Թրամփի որոշմամբ, ինչն, ըստ ամենայնի, բացատրվում էր Իսրայելի ղեկավարության հետ լրացուցիչ համաձայնեցումների անհրաժեշտությամբ:

2. ԱՄՆ-ի երկընտրանքը. Իսրայելի պահանջների և ՍԱԹ-ի պահանջների միջև

Այս լուրը լայն արձագանք գտավ համաշխարհային ԶԼՄ-ներում, քանի որ Դ. Թրամփն, ի տարբերություն իր նախորդի՝ Ջ. Բայդենի, սկզբնական փուլում Սաուդյան Արաբիայից չի պահանջել միջուկային ծրագրի զարգացման դիմաց ճանաչել Իսրայելի պետությունը: Այնուամենայնիվ, Սպիտակ տան դիրքորոշումն արագ փոխվեց. արդեն հաջորդ օրը ԱՄՆ նախագահը հայտարարեց, որ գործարքը հնարավոր է միայն այն դեպքում, եթե Էր-Ռիադը միանա «Աբրահամական համաձայնագրերին»: Նման քայլը ինքնաբերաբար պարտավորեցնում էր Սաուդյան Արաբիային նախ ճանաչել հրեական պետությունը, ապա կարգավորել հարաբերությունները նրա հետ՝ ենթադրելով փոխադարձ հավակնություններից հրաժարում և համագործակցության զարգացում տնտեսության, արտաքին քաղաքականության և մշակութային կապերի ոլորտներում:

Սակայն մեկ օր անց հայտնի դարձավ պահանջների նոր ճշգրտման մասին. Դ. Թրամփը Էր-Ռիադին ուղղակիորեն կոչ արեց պաշտոնապես ճանաչել Իսրայելը՝ այս անգամ առանց «Աբրահամական համաձայնագրերի» հիշատակումի:

Սաուդյան կողմին առաջադրվող պայմանների մշտական փոփոխությունները, ինչպես նաև ձեռնարկվող քայլերի ընդհանուր իմպուլսիվությունը վկայում են, որ երկու օր շարունակ Թել Ավիվը և Էր-Ռիադը շարունակական երկխոսություն են վարել Վաշինգտոնի հետ՝ փոխադարձ ճնշում գործադրելով Սպիտակ տան ղեկավարի վրա: Ամենայն հավանականությամբ, Դ. Թրամփի «Աբրահամական համաձայնագրերի» մասին հայտարարությունը պայմանավորված էր Իսրայելի ղեկավարության դժգոհությամբ, որն արձագանքել էր «Համաձայնագիր 123»-ը ստորագրելու ԱՄՆ պատրաստակամության մասին լուրին՝ առանց Էր-Ռիադի կողմից որևէ հանդիպակաց պարտավորության: Չի բացառվում, որ ի պատասխան դրան ՍԱԹ-ը որդեգրել է կոշտ դիրքորոշում և սպառնացել է ամբողջությամբ դուրս գալ գործարքից: Արդյունքում՝ ԱՄՆ նախագահը կրկին ճշգրտեց իր պահանջները՝ սահմանափակվելով միայն Իսրայելի պաշտոնական ճանաչման պայմանով և իր հռետորաբանությունից բացառելով «Աբրահամական համաձայնագրերի» հիշատակումները:

3. Գործարքի չափանիշները և ռիսկերը

Միջուկային ծրագրի վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել ապագայում իսրայելական խնդրի շուրջ փոխզիջում մշակելու ակնկալիքով: Սենատի և Ներկայացուցիչների պալատի կողմից արգելափակող

գործողությունների բացակայության դեպքում փաստաթուղթը Կոնգրեսում հավանություն ստանալուց հետո 90 օրվա ընթացքում պաշտոնապես ուժի մեջ կմտնի: Սա հնարավորություն կտա Սաուդյան Արաբիայի Թագավորությանը օգտվել ԱՄՆ-ի տեխնոլոգիական աջակցությունից, փորձագիտական բազայից և հումքային պաշարներից՝ իր *«խաղաղ միջուկային ծրագրի»* տարրերը ծավալելու համար:

Էր-Ռիադը ստանում է ուրանի հարստացման իրավունք *«խաղաղ ատոմի զարգացման»* շրջանակներում՝ քաղաքացիական ենթակառուցվածքների պահանջմունքները բավարարելու և աճող տնտեսության էներգահաշվեկշռի բազմազանացման նպատակով: Համաձայն պայմանագրի և ԱՄՆ «Ատոմային էներգիայի մասին» օրենքի 123-րդ բաժնի՝ սաուդյան կողմը պարտավորվում է քաղաքացիական մշակումները չվերածել ռազմական մշակումների՝ Վաշինգտոնին երաշխավորելով լիարժեք մշտադիտարկման հնարավորություն:

ԱՄՆ նախագահի աշխատակազմի ներկայացուցիչները հայտարարում են, որ տասնյակ միլիարդավոր դոլարի արժողությամբ և 30 տարվա գործողության ժամկետով այս գործարքի չափանիշները լիովին բացառում են *«խաղաղ ծրագրի»* վերափոխումը ռազմական նախագծի: Սաուդյան Արաբիայի ղեկավարությունը կիսում է այս դիրքորոշումը՝ փաստաթուղթը հիմնավորելով տնտեսության արդիականացման և էներգիայի աղբյուրների բազմազանացման խնդիրներով:

Այնուամենայնիվ, փորձագետների մի մասը նշում է, որ խաղաղ միջուկային մշակումների շրջանակներում փակ օղակի տեղակայումը տեխնիկապես ճանապարհ է բացում մինչև զենքի մակարդակ ուրանի հարստացման համար: Վերլուծաբանները ընդգծում են նաև երաշխիքների բացակայությունը, որ Վաշինգտոնն ու Էր-Ռիադը այս հարցում փոխադարձ համաձայնության կհասնեն: Թույլատրվում է, որ աշխարհաքաղաքական իրավիճակի վատթարացումը կարող է ԱՄՆ-ին դրդել միջնաժամկետ հեռանկարում նպատակահարմար համարել միջուկային զենքի հասանելիության տրամադրումը Թագավորությանը:

Ուշագրավ է, որ երկու կողմերն էլ ջանքեր են գործադրել ամերիկա-սաուդյան ծրագրի նկատմամբ միջազգային վերահսկողությունը սահմանափակելու ուղղությամբ: Համաձայնագրում ներառված չէ «ՄԱԳԱՏԷ-ի լրացուցիչ արձանագրությունը», ինչը զգալիորեն սահմանափակում է գործակալության՝ հանկարծակի ստուգումներ անցկացնելու հնարավորությունները: ՄԱԳԱՏԷ-ի կողմից արդեն հայտարարված օբյեկտների դիտարկումը կշարունակվի, սակայն չհայտարարագրված կենտրոնների նկատմամբ ընդլայնված տեսչություններն անհնար կլինեն: Փորձագետների կարծիքով՝ հենց այս դետալն է պարունակում առանցքային սպառնալիք. Սաուդյան Արաբիան ստանում է տեսական հնարավորություն՝ *«խաղաղ ատոմի»* քաղաքացիական ծրագրի պաշտոնական առաջխաղացմանը զուգահեռ գաղտնի օբյեկտներում մշակելու մարտական միջուկային լիցքերի ստեղծման տեխնոլոգիաներ:

4. Միջուկային գործոնը որպես ԻԻՀ զսպման գործիք

Վաշինգտոնի և Էր-Ռիադի երկարաժամկետ աշխարհաքաղաքական ծրագրերի առկայության լրացուցիչ հաստատում է նաև շրջանակային պայմանագրի կնքման կոնկրետ ժամկետը: Տրամաբանական է ենթադրել, որ այս քայլը ուղղակիորեն պայմանավորված է Սպիտակ տան իրանական օրակարգով՝ Օմանում և Շվեյցարիայում բանակցային փուլերի ձախողմամբ և Իրանի հետ զինված դիմակայության ակտիվ փուլի վերսկսմամբ: Թեհրանի հրաժարումը միջուկային ենթակառուցվածքի ապամոնտաժումից և հարստացված ուրանի պաշարները երրորդ կողմին փոխանցելուց, փաստորեն, տորպեդահարեց խաղաղ կարգավորման ամերիկյան հայեցակարգը: Միևնույն ժամանակ, ամերիկյան հետախուզության տվյալները ստիպեցին վարչակազմին հրաժարվել լայնածավալ ներթափանցման գործողությունից՝ ուղղված իրանական միջուկային ակտիվների բռնի առգրավմանը:

Իրանի ապամիջուկայնացման խնդիրը դիվանագիտական կամ ռազմական եղանակներով կարգավորելու անհնարինությունը Վաշինգտոնին կանգնեցրել էր ռազմավարական փակուղու առաջ: Դրանից խուսափելու նպատակով Միացյալ Նահանգները նախաձեռնել է տարածաշրջանային միջուկային ներուժի համաչափ հավասարակշռման գործընթաց: Սա ենթադրում է հարստացման նմանատիպ տեխնոլոգիաների տրամադրում Իրանի առանցքային տարածաշրջանային ընդդիմախոսին՝ Սաուդյան Արաբիային: Այս ռազմավարության անուղղակի ապացույց է այն, որ «Համաձայնագիր 123»-ի բոլոր չափումները համաձայնեցվել էին դեռևս 2025 թ. աշնանը: Փաստաթղթի ստորագրման ձգձգումը բացատրվում էր ԱՄՆ-ի հաշվարկով՝ Իրանի դեմ գարնանային ռազմական արշավի հաջողության դեպքում վերջակետ դնելու Թեհրանի «միջուկային հավակնություններին»: Նման սցենարում Վաշինգտոնը հույս ուներ Էր-Ռիադին թելադրել առավել կոշտ պայմաններ՝ ներառյալ Իսրայելի ինքնիշխանության անվերապահ ճանաչումը և Սաուդյան Արաբիայի ինտեգրումը «Աբրահամական համաձայնագրերի» կառուցվածքում:

Այսպիսով, Իրանի ապամիջուկայնացման հարցում ռազմավարական անորոշությունը ԱՄՆ-ին ստիպում է առաջնորդվել տարածաշրջանային մրցակցի համաչափ տեխնոլոգիական հզորացման տրամաբանությամբ: Սպիտակ տունը ելնում է այն կանխատեսումից, որ նման մոտեցումը հնարավորություն կտա կամ հասնել զիջումների Թեհրանից հնարավոր խաղաղ խորհրդակցությունների ընթացքում, կամ՝ անբարենպաստ սցենարի դեպքում, գործարկել մեխանիզմներ, որոնք կթուլացնեն Իսլամական Հանրապետության ազդեցությունը և կզսպեն նրա միջուկային ձգտումները:

Տվյալ հարցը Վաշինգտոնի համար կրիտիկական կարևորություն ունի՝ ստիպելով գործել օպերատիվ, նույնիսկ Իսրայելի շահերին էական վնաս հասցնելու գնով: Թել Ավիվը պատրաստ չէ համակերպվել իրանական միջուկային ենթակառուցվածքի և հարստացված ուրանի պաշարների անհասանելիության մտքի հետ, ուստի պնդում է, որ պատերազմն

ավարտվի Թեհրանին միջուկային ծրագրի զարգացման ցանկացած հեռանկարից զրկելու պայմանով: Միևնույն ժամանակ, Իսրայելը, որն այսօրվա դրությամբ ունի միջուկային գերտերության բացառիկ կարգավիճակ Մերձավոր Արևելքում, կտրականապես դեմ է այդ ակումբի ընդլայնմանը արաբական պետությունների հաշվին: Իբրև կատարյալ տարբերակ, Թել Ավիվը Սաուդյան Արաբիայի համար կնախընտրեր ԱՄԷ-ի սցենարի կրկնությունը, որտեղ «Բարակա» ԱԷԿ-ի գործարկումից հետո Աբու Դաբին կամավոր հրաժարվեց ուրանի հարստացումից: Սակայն Էր-Ռիադը սկզբից որդեգրել է այլ դիրքորոշում:

Ի պատասխան՝ Իսրայելը Սպիտակ տան համար կոշտ շրջանակ է նշել. գործարքին համաձայնությունը պայմանավորված էր Սաուդյան Արաբիայի կողմից Իսրայելի ինքնիշխանության լիակատար ճանաչմամբ և «Աբրահամական համաձայնագրերին» ինտեգրմամբ: Այնուամենայնիվ, ներկայիս շտապողականությունը Վաշինգտոնին ստիպում է անտեսել իր առանցքային գործընկերոջ առավելապաշտական պայմանները, թեև ԱՄՆ-ը զուգահեռաբար շարունակում է Թագավորությունից որոշակի զիջումներ կորզել իսրայելական պահանջների օգտին:

5. Տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության վերափոխումը և ՀԺՀ-ի դերը

Իրանական ճգնաժամի սրումը Պարսից ծոցի պետություններին ստիպել է վերանայել տարածաշրջանային կայունության ապահովման ձևավորված մոտեցումները՝ առաջին պլան մղելով անվտանգության ճարտարապետության բազմազանացման անհրաժեշտության շուրջ քննարկումները: Գործնական փորձը ցույց տվեց Միացյալ Նահանգների անկարողությունը՝ ապահովելու արաբական միապետությունների, ինչպես նաև նրանց հիմնական արդյունաբերական օբյեկտների և ածխաջրածինների փոխադրման լոգիստիկ երթուղիների հուսալի պաշտպանությունը:

Մերձավոր Արևելքում տասնամյակներ շարունակ ձևավորված ռազմավարական զսպման ամերիկյան համակարգը ոչ միայն անարդյունավետ էր Թեհրանի մարտահրավերներին դիմակայելու հարցում, այլև իր ծավալմամբ ծառայեց որպես «գրգռիչ», որը դրդեց Իրանին ուղղակի առճակատման հարևանների հետ: Այս պայմաններում Սաուդյան Արաբիան, հանդես գալով որպես միապետությունների ճանաչված «առաջնորդ», պետական բարձրագույն մակարդակով բազմիցս հայտարարել է իր տարածքից ամերիկյան ռազմական օբյեկտներն ու զորակազմերը դուրս բերելու մտադրության մասին՝ դրանք գնահատելով որպես ապակայունացնող գործոն: Դրա փոխարեն Էր-Ռիադը ծրագրում է առաջ տանել հավաքական անվտանգության նորացված հայեցակարգը, որը հիմնված է Ծոցի պետությունների պաշտպանական կապերի բազմավեկտորության և բազմազանացման վրա:

Հաշվի առնելով վերջին տասնամյակներում Չինաստանի ֆինանսատնտեսական ներկայության աճը Պարսից ծոցի գոտում՝ փորձագետների ենթադրությունները Պեկինի

ներգրավման վերաբերյալ տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության վերափոխման գործընթացում օրինաչափ են թվում: Այսօր ՉԺՀ-ն առանցքային առևտրատնտեսական գործընկեր է արաբական մի շարք միապետությունների համար, որոնց թվում առաջատար տեղ է զբաղեցնում Սաուդյան Արաբիան. փոխադարձ ապրանքաշրջանառությունը արդեն հատել է $100 միլիարդի սահմանը:

Այս տնտեսական ինտեգրման հիմքը Չինաստանի կողմից Սաուդյան ածխաջրածինների և նավթաքիմիական արտադրանքի գնումներն են, որոնք կազմում են Էր-Ռիադի ընդհանուր արտահանման մոտ 17%-ը, մինչդեռ ՉԺՀ-ին բաժին է ընկնում Թագավորության ներմուծման մոտ 12%-ը: Նման խոր ինտեգրման պայմաններում վերլուծաբանները արձանագրում են ակնհայտ անհամաչափություն ռազմաքաղաքական բաղադրիչում: Քանի որ այս ենթաշրջանը Չինաստանի համար էներգետիկ հումքի կարևոր աղբյուր է, դրա ցանկացած ապակայունացում ուղղակի ռիսկեր է պարունակում աշխարհի երկրորդ տնտեսության անվտանգության համար: Սա կանխորոշում է Պեկինի երկարաժամկետ ձգտումը՝ այս կամ այն ձևաչափով ռազմական ներկայություն հաստատելու տարածաշրջանում:

Կայունացնող կարևոր գործոն է Չինաստանի՝ ինչպես Սաուդյան Արաբիայի, այնպես էլ Իրանի հետ հավասարակշռված շփումներ պահպանելու ունակությունը, ինչը հնարավորություն է տալիս Պեկինին հանդես գալ որպես կարգավորող կողմ՝ հավասարակշռելով հավակնությունները և հարթեցնելով առանցքային մերձավորարևելյան առաջնորդների միջև առկա տարաձայնությունները:

Վաշինգտոնում գիտակցում են, որ Իրանի դեմ սանձազերծված պատերազմը խախտել է ուժերի տարածաշրջանային հավասարակշռությունը և հանգեցրել անվտանգության վակուումի ձևավորմանը: Պարսից ծոցի առանցքային պետությունների միջև փոխզիջման հասնելու դեպքում այդ ազատ տարածությունը կարող է զբաղեցնել Չինաստանը: Նման փոխհամաձայնության հավանականությունը մեծ է, քանի որ Պեկինը, ի տարբերություն Վաշինգտոնի, պահպանել է չեզոք դիրքորոշում և խուսավարել է արաբա-իրանական հակամարտության կողմերի միջև: Սա պայմանավորված է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության լոգիստիկ համակարգի համար Իրանի ռազմավարական նշանակությամբ, ինչպես նաև արաբական միապետություններից էներգակիրների մատակարարումից չինական տնտեսության բարձր կախվածությամբ:

Այս գործոնների պատճառով Չինաստանի միջնորդությունը և «իրավարարությունը» կարող են դառնալ կայունության ապահովման ավելի արդյունավետ գործիք, քան ամերիկյան ռազմավարությունը, որը հիմնված է տարածաշրջանում միակողմանի ուժային կարգավորման վրա:

Ամերիկյան վերահսկողության ներքո Սաուդյան Արաբիային սեփական միջուկային ծրագիր զարգացնելու հնարավորության տրամադրումը, ի հակակշիռ իրանական նախագծերի, Վաշինգտոնի փորձն է՝ կանխելու իր ազդեցության թուլացումը արաբական

միապետությունների վրա: Այս քայլը կոչված է ձևավորելու ԱՄՆ-ից Թագավորության կախվածության նոր ուրվագիծ՝ միաժամանակ չեզոքացնելով Չինաստանի ռազմատեխնիկական առաջխաղացման ռիսկերը դեպի Մերձավոր Արևելք: Սպիտակ տանը կարծում են, որ սաուդյան *«խաղաղ ատոմի»* քաղաքացիական նախագծի հիման վրա միջուկային զենքի մշակման ենթադրական ներուժը մնում է անայլընտրանքային գործիք՝ զսպելու Էր-Ռիադի հնարավոր վերակողմնորոշումը դեպի արևելք:

Վաշինգտոնում լուրջ են վերաբերվում Սաուդյան Արաբիայի փաստացի առաջնորդ արքայազն Մուհամեդ իբն Սալմանի հայտարարություններին. եթե Իրանը միջուկային զենք ձեռք բերի, ապա Էր-Ռիադը բոլոր ջանքերը կներդնի սեփական միջուկային զինանոց ստեղծելու համար: Սա փաստացի վերջնագիր էր ԱՄՆ-ին. ամերիկյան կողմը կամ պետք է ամբողջությամբ վերացներ իրանական միջուկային նախագիծը, կամ թույլ տար սաուդցիներին մշակել միջուկային զենք: Ներկայիս քայլերը ցույց են տալիս, որ Սպիտակ տունը ճանաչել է առաջին տարբերակի իրականացման անհնարինությունը:

Ստեղծված իրավիճակում Վաշինգտոնին այլընտրանք չի մնացել *«միջուկային գործարքի»* խափանումը Էր-Ռիադի հետ հնարավորություն կտար Չինաստանին զբաղեցնել առաջացած դատարկությունը: Պեկինը, զգուշություն ցուցաբերելով, հավանաբար կգործի անուղղակիորեն՝ ներգրավելով Պակիստանին, որի հետ Սաուդյան Արաբիան արդեն ձևավորել է համապարփակ ռազմաքաղաքական դաշինք: Նման սցենարի դեպքում ԱՄՆ-ն կզրկվի տարածաշրջանային *«խաղաղ միջուկային ծրագրերի»* նկատմամբ վերահսկողության լծակներից, որոնք կարող են սրընթաց վերաճել միջուկային սպառազինությունների մրցավազքի:

6. Մերձավոր Արևելքի համար «միջուկային սողանքի» հեռանկարները

Փորձագետները ընդգծում են, որ սաուդցիների հետ գործարքում երկար դադարից հետո ԱՄՆ-ն ակնհայտորեն շտապում է: Սա պայմանավորված է տարածաշրջանում *«միջուկային հավակնությունները»* դադարեցնելու անհնարինության գիտակցմամբ, որոնք Վաշինգտոնը փորձում է վերցնել իր վերահսկողության և տեխնոլոգիական ապահովման ներքո: Սակայն նման մոտեցումը հղի է բազմաթիվ խնդիրներով, որոնք, ի հեճուկս ամերիկյան հաշվարկների, կարող են ոչ թե դանդաղեցնել, այլ արագացնել և առավել ծավալուն դարձնել տարածաշրջանում ու աշխարհում *«միջուկային հավակնությունների»* տարածման գործընթացը:

Առաջին հերթին, Իրանը ամերիկա-սաուդյան գործարքի պայմաններում լրացուցիչ հիմքեր է ստանում սեփական ինքնուրույն միջուկային ծրագիրն օրինականացնելու համար: Թուրքիան նույնպես արագացնում է այս ոլորտում իր աշխատանքները, որոնք մինչ վերջերս փորձում էր չհրապարակել: Չի բացառվում, որ իր հավակնությունների մասին կհայտարարի նաև Եգիպտոսը՝ պահանջելով ճանաչել սեփական միջուկային շրջափուլը գործարկելու իրավունքը:

Այս զարգացումները ԱՄՆ-ի համար դժվար կառավարելի են լինելու: Այդ պատճառով Սաուդյան Արաբիայի հետ «Համաձայնագիր 123»-ը շատ փորձագետների հիշեցնում է «Պանդորայի արկղի» բացման հետևանքները: